# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 49

## ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Քասախ համայնքի ավագանու 2016թ-ի դեկտեմբերի 28-ի թիվ 11 արտահերթ նիստի օրակարգը

1. Քասախ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 6-ի N 48-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
2. «Քասախի Արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի լուծարման մասին
3 .« Քասախի Մշակույթի Կենտրոն» ՀՈԱԿ-ի վերակազմակերպման մասին
4. Քասախի «Արվեստ մշակութային դպրոց-ստուդիա» ՀՈԱԿ-ի տնօրենի թեկնածուին համաձայնություն տալու մասին
5. Քասախ համայնքի էթիկայի և վարքի կանոնները սահմանելու մասին
6. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնքի համայնքային սեփականություն համարվող գույքի և հողերի օտարելու թույլտվություն տալու մասին
7. Քասախ համայնքում տեղական տուրքերի եվ վճարների 2017 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին
8 .Քասախ համայնքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների 2017թվականի դրույքաչափերը սահմանելու մասին
9. Քասախ համայնքի ղեկավարի 2017 թվականի վարձատրության չափը սահմանելու մասին
10.Քասախ համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքի ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատակիցների, թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի սահմանման մասին

11. Քասախ համայնքի համայնքապետարանի ծառայողական ավտոմեքենային վառելիք հատկացնելու մասին

12.Քասախ համայնքի 2017թվականի. բյուջեն հաստատելու մասին

13.2016 թվականի տարեկան գույքագրման արդյունքների ամփոփման և համայնքի սեփականություն հանդիսացող հիմնական միջոցները համայնքի հաշվեկշռում մուտքագրելու մասին

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵԴՐԱԿ

2. ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԻԿ

3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵԴՐԱԿ

4. ՂԱԶԱՐՅԱՆ ՊԱՅԾԱՌ

5. ՄԿՐՏՉՅԱՆ ԳՐԵՏԱ

6. ՍԱՀԱԿՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 50-Ն

## ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N 48-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջներով, ***համայնքի ավագանին որոշում է***

Քասախ համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 6-ի «Քասախ համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը հաստատելու մասին» N 48-Ն որոշման վերնագրից և որոշումից հանել «հնգամյա» բառերը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵԴՐԱԿ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԻԿ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵԴՐԱԿ
4. ՂԱԶԱՐՅԱՆ ՊԱՅԾԱՌ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ԳՐԵՏԱ
6. ՍԱՀԱԿՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 51

## «ՔԱՍԱԽԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ի ԼՈՒԾԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է***

1. Լուծարել «Քասախի Արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ը

2. Ստեղծել լուծարման հանձնաժողով՝ գործընթացները օրենքով սահմանված կարգով կազմակերպելու համար

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017թվականի հունվարի 1-ից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵԴՐԱԿ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԻԿ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵԴՐԱԿ
4. ՂԱԶԱՐՅԱՆ ՊԱՅԾԱՌ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ԳՐԵՏԱ
6. ՍԱՀԱԿՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 52

### «ՔԱՍԱԽԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀՈԱԿ-Ի ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է***

1. Միացնել «Քասախի Արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ը «Քասախի Մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ին:

2. Միացման արդյունքում վերակազմակերպել «Քասախի Մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ը և անվանել Քասախի «Արվեստ մշակութային դպրոց-ստուդիա» ՀՈԱԿ:

3. Հաստատել վերակազմակերպված Քասախի «Արվեստ մշակութային դպրոց-ստուդիա» ՀՈԱԿ-ի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի

4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցելու պահից Քասախի «Արվեստ մշակութային դպրոց-ստուդիա» ՀՈԱԿ-ը վերակազմակերպման արդյունքում հանդիսանալու է «Քասախի Արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի բոլոր իրավունքներով և պարտականություններով իրավահաջորդը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017թվականի հունվարի 1-ից:

Դեմ -0 Ձեռնպահ -0

Կողմ -6

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵԴՐԱԿ

2. ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԻԿ

3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵԴՐԱԿ

4. ՂԱԶԱՐՅԱՆ ՊԱՅԾԱՌ

5. ՄԿՐՏՉՅԱՆ ԳՐԵՏԱ

6. ՍԱՀԱԿՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ**

ԿԱԶՄՎԱԾ Է 14.12.2009Թ.

ԲԱՂԿԱՑԱԾ Է 7 ԹԵՐԹԻՑ

ՏՊԱԳՐՎԱԾ Է՛ ____ ՕՐԻՆԱԿ

ՕՐԻՆԱԿ __________

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ՆԱԻՐԻԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ «25» «01» 2010Թ
ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐԸ՝ 80.210.01321
ՎԿԱՅԱԿԱՆ՝ 03Ա-086888, ՀՎՀՀ՝ 03313698

«25» «01» 2010Թ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԹԻՎ ____
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՆՑՎԱԾ Է
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ
ԿՈՂՄԻՑ
«_____» «_______________» 20___թ

_______________________________

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
28-Ի N 52 ՈՐՈՇՄԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [illegible]ՐՏՉՅԱՆ

# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ՔԱՍԱԽԻ « ԱՐՎԵՍՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴՊՐՈՑ-ՍՏՈՒԴԻԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

### (ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Քասախ համայնքի
ավագանու 2016թվ դեկտեմբերի 28-ի N 52 որոշման

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Քասախ համայնքի
ավագանու 2009թվ. դեկտեմբերի 14-ի N 57 որոշման

# 1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 **ՔԱՍԱԽԻ «ԱՐՎԵՍՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴՊՐՈՑ-ՍՏՈՒԴԻԱ»** համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետև՝ կազմակերպություն/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հանդիսանում է Քասախ համայնքի ավագանու 2009թ.-ի դեկտեմբերի 14-ի թիվ 57 որոշմամբ ստեղծված «Քասախի Մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի և «Քասախի արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի իրավահաջորդը: Կազմակերպությունը ստեղծվել է առանց ժամկետային սահմանափակման:

1.2 Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ, Հայաստան Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.3 Հիմնադրի և կազմակերպության միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ: Քասախ համայնքի անունից կազմակերպության կառավարումն իրականացնող մարմին հանդիսանում է համայնքի ղեկավարը, որի ենթակայությանն է հանձնվում կազմակերպությունը:

1.4 Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային իրավունքներ, կրել պարտականություններ,դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.5 Կազմակերպությունը այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

1.6 Կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ, որոնք ստեղծվում են հիմնադրամի որոշմամբ և օրենքով սահմանված կարգով ենթակա են հաշվառման իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող մարմնի կողմից:

1.7 Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և կազմակերպության հայերեն անվամբ կլոր կնիք, դրոշմակնիք, կարող է ունենալ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

1.8 Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ,եկամուտների և ծախսերի նախահաշիվ:

1.9 Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում մինչև կազմակերպության պետական գրանցումը ծագած կազմակերպության ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:

1.10 Կազմակերպության անվանումն է՝

- Հայերեն – **ՔԱՍԱԽԻ «ԱՐՎԵՍՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴՊՐՈՑ-ՍՏՈՒԴԻԱ» համայնքային** ոչ առևտրային կազմակերպություն:
- Ռուսերեն - **«Школа-студия искусства и культуры» некоммерческая организация общины Касаха.**

1.11 Կազմակերպության հասցեն՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, գյուղ Քասախ Ս. Ջալալյան 2

## *2.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ*

2.1 Հաստատությունը ստեղծվում է մշակութային նախնական մասնագիտական կրթություն իրականացնելու, մշակութային արժեքների պահպանման և պրոպագանդման, անհատի համակողմանի մշակութային դաստիարակության, ազգաբնակչության ազատ ժամանցի կազմակերպման իրականացման ուղղությամբ:

2.2 Դպրոց-ստուդիայի նպատակներն են՝

- Իրականացնել արվեստի, մշակույթի տարբեր ձևերի նախնական մասնագիտական կրթություն,
- Իրականացնել ազգաբնակչության շրջանում արտադպրոցական, գեղագիտական, մշակութային և նախակրթական խորը դաստիարակություն,
- Իրականացնել ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության ծանոթացում և ուսուցում,
- Նախապատրաստել տաղանդավոր երեխաներին արվեստի և մշակույթի բնագավառի համապատասխան միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելու համար
- Իրականացնել մշակութային կրթություն և գեղագիտական դաստիարակության տարբեր ձևերի վճարովի ուսուցում,
- Բնակության սոցիալական և տարիքային տարբեր խմբերի համար արվեստի զանազան ճյուղերի, մշակույթի և արհեստների ուսուցողական ծրագրերի իրականացում:

2.3 Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

- Համերգային գործունեություն,
- Հրատարակչական գործունեություն:
- Ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար /ոչ առևտրային կազմակերպությունը/ իրավունք ունի ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից:

Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կազմակերպությունը կարող է զբաղվել լիցենզիայի հիման վրա:

2.4 Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է հիմնադիրը:

2.5 Համայնքային բյուջեով կազմակերպության համար ուղղակիորեն նախատեսված միջոցների սահմաններում կազմակերպության կողմից համայնքին մատուցվող ծառայությունների աշխատանքների և ապրանքների գնումն իրականացվում է մեկ աղբյուրից գնում-

ների կատարման ձևով: Կազմակերպության կողմից համայնքային այլ ծառայությունների աշխատանքներ կարող են մատուցվել կամ ապրանքներ իրացվել միայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:
2.6 Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարումները կատարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով և չափով:
2.7 Կազմակերպությունը հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

## *3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ*

3.1 Կազմակերպության կառավարումը իրականացնում են հիմնադիրը և կազմակերպության գործադիր մարմինը՝տնօրենը:
3.2 Կազմակերպության հիմնադիրն ունի կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝
ա/ կազմակերպության հիմնադրումը,
բ/ կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,
գ/ կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը:
3.3 Հիմնադիրը /համանքի ղեկավարը/ իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ իրականացման համար: Քասախ համայնքի ղեկավարը՝
ա/ հաստատում է կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և /կամ/ ամրացվող համայնքին պատկանող գույքի կազմը,
բ/ հաստատում է կազմակերպության կանոնադրությունը և կանոնադրության փոփոխությունները,
գ/ սահմանում է կազմակերպության կառավարման համակարգը,
դ/ նշանակում է կազմակերպության լուծարման հանձնաժողով և հաստատում լուծարման հաշվեկշիռը,
ե/ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացվում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
զ/ իրականացնում է կազմակերպության գործունեության վերահսկողությունը,
է/ կասեցնում, կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցադրումները,
ը/ լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները,
թ/ վերահսկողություն է իրականացնում կազմակերպությանը ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,
ժ/ վերահսկողություն է իրականացնում կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատես-

ված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման և ձեռք բերման կամ վարձակալության հանձնման համար,

ի/ հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,

լ/ հաստատում է կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը,

խ/ իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով նախատեսված այլ գործառույթներ:

3.4 Կազմակերպության գործադիր մարմինը.

3.4.1 Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը: Կազմակերպության տնօրենը, օրենքով, հիմնադրի սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ օրենքների, իրավական այլ ակտեր հիմնադրամի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

3.4.2 Տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիրը, որը համայնքի անունից ստորագրում է Քասախ համանքի ղեկավարը:

3.4.3 Կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակվող անձը պետք է բավարարի օրենքով նախատեսված պահանջներին:

3.4.4 Կազմակերպության տնօրենը պետք է ունենա մասնագիտական բարձրագույն կրթություն, չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

3.4.5 Տնօրենի պաշտոնում նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը պատճառված վնասի համար:

3.4.6 Կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակվող անձը պարտավոր է չկատարել Հիմնադրի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները,կարգադրությունները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

3.5 Տնօրենը՝

ա/ առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից,ներկայացնում նրա շահերը և կնքում գործարքներ,

բ/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի որոշումներով ու կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները,

գ/ տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

դ/ աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում /աշխատանքային պայմանագրի համաձայն/ կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ ու նշանակում կարգապահական տույժեր,

[illegible] բացում է հաշվարկային հաշիվներ,

[illegible] աշխատանքի բաշխում տեղակալների միջև,

[illegible] կազմակերպության կանոնադրության կառուցվածքն ու կառուցվածքային [illegible] սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կա-[illegible] պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումները,

թ/ ապահովում է կազմակերպության գործունեության մասին համապատասխան հաշվետվությունների կազմումը և դրանք սահմանված կարգով ներկայացնում հիմնադրին,
ժ/ իրականացնում է օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:
3.6 Կազմակերպության ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝առարկայական մեթոդական միավորումներ:

## *4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ*

4.1 Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության տնտեսական գործունեության վերակազմակերպման ժամանակ՝ Հիմնադրի որոշմամբ սահմանված չափով հանձնված գույքից, հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրանց հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:
4.2 Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին,հիմնադրի որոշումներին և /կամ/ սույն կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
4.3 Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:
4.4 Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:
4.5 Հիմնադիրը կարող է կազմակերպությանը անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:
Հիմնադիրը իրավունք ունի հետ վերցնել իր կողմից կազմակերպությանը ամրացված գույքը:
4.6 Կազմակերպությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:
Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը համայնքի անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:
Ամրացված գույքի օգտագործման արդյունքում կազմակերպության ստացած եկամուտները կազմակերպության սեփականությունն են:
Կազմակերպությանը ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հանդիսանում են հիմնադրի սեփականությունը:
4.7 Հիմնադրի կողմից գույքը կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:
4.8 Հիմնադրի կողմից կազմակերպությանը ամրացված անշարժ գույքի կամ համայնքային պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի համայնքային գրանցման պահից:
4.9 Կազմակերպության ֆինանսական միջոցների հիմնական աղբյուրն է հանդիսանում աշխատողների համար վարձից գոյացած գումարները,համայնքային նշանակության ծախսերի ամրագրված եկամուտներից հատկացումները, ինչպես նաև վճարովի ծառայությունների և այլ կանոնադրությամբ նախատեսված և օրենսդրությամբ չարգելված

այլ գործունեության արդյունքում գոյացած սեփական միջոցներից, իրավաբանական, ֆիզիկական անձանց կամավոր ներդրումներից և հանգանակություններից, տեղական և արտասահմանյան միջազգային կազմակերպությունների կրթամշակութային և ուսումնական գործունեությանը տրամադրված դրամաշնորհներից:

Տարբեր աղբյուրներից մուտք եղած բոլոր միջոցները մտնում են կազմակերպության եկամուտների մեջ և կազմում են նրա ֆինանսական միջոցների միասնական ֆոնդ:

4.10 Համայնքի ավագանին հաստատում է կազմակերպության հաստիքային ցուցակը և սահմանում է պաշտոնային դրույքներ:

4.11 Կազմակերպության մանկավարժական, վարչատնտեսական աշխատողների, խմբակների և ուսումնաօժանդակ անձնակազմի թվաքանակը սահմանվում է նախահաշվով հաստատված աշխատավարձի ֆոնդի շրջանակներում:

4.12 Վարչական և այլ աշխատողների աշխատավարձը հաշվարկելիս ի պաշտոնե աշխատավարձերը և տարիքային դրույքները պետք է դիտվեն որպես երաշխավորվող վարձատրության նվազագույն չափ:

4.13 Կազմակերպության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է հիմնադիրը:

4.14 Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի /վերստուգման/ հիմնադրի կողմից ընտրված աուդիտորի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության Ֆինանսական գործառույթները իրականացնող մարմնի կողմից:

## *5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ*

5.1 Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթը օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

5.2 Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է հիմնադիրը:

## *6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ*

6.1 Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:
Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դատական կարգով:

6.2 Կազմակերպության լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, մնացած գույքը ուղղվում է համայնքային բյուջե:

6.3 Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 53

## ՔԱՍԱԽԻ «ԱՐՎԵՍՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴՊՐՈՑ-ՍՏՈՒԴԻԱ» ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի պահանջներով, *հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝* ***համայնքի ավագանին որոշում է***

1. Տալ համաձայնություն Քասախ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված Քասախի «Արվեստ մշակութային դպրոց-ստուդիա» ՀՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում Ալլա Դավիթի Ասատրյանին նշանակելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017թվականի հունվարի 1-ից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵԴՐԱԿ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԻԿ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵԴՐԱԿ
4. ՂԱԶԱՐՅԱՆ ՊԱՅԾԱՌ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ԳՐԵՏԱ
6. ՍԱՀԱԿՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 54

### ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԷԹԻԿԱՅԻ ԵՎ ՎԱՐՔԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածը, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետություն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 28-րդ հոդվածը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Սահմանել Քասախ համայնքի էթիկայի և վարքի կանոնները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017թվականի հունվարի 1-ից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵԴՐԱԿ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԻԿ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵԴՐԱԿ
4. ՂԱԶԱՐՅԱՆ ՊԱՅԾԱՌ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ԳՐԵՏԱ
6. ՍԱՀԱԿՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ**

Հավելված
Քասախ համայնքի ավագանու
2016թվականի դեկտեմբերի 28-ի
N 54 որոշման

# ԿԱՆՈՆՆԵՐ
# ՔԱՍԱԽԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
# ԷԹԻԿԱՅԻ ԵՎ ՎԱՐՔԻ

## Կանոնների նպատակը

1. Սույն Կանոնների նպատակն է սահմանել էթիկական վարքագծի չափանիշներ, որոնց պետք է հետևի տեղական ինքնակառավարման մարմինը (այսուհետ՝ Քասախի համայնքապետարանը) իր ամենօրյա պարտականությունների կատարման ընթացքում հանուն հանրության կողմից վերականգնման ու հաստատման:
2. Սույն Կանոնները չպետք է դիտվեն որպես առանձին փաստաթուղթ, այլ որպես քաղաքական գործելակերպի, Քասախի համայնքապետարանի գործունեությունը կարգավորող վարչական ընթացակարգերի կամ ներքին կանոնակարգերի անբաժանելի մաս՝ շեշտելով Քասախի համայնքապետարանի գործունեության էթիկական կողմն ապահովելու կարևորությունը և այն դարձնելով կառավարման գործառույթ:
3. Սույն Կանոններն իրենից ներկայացնում են դրույթների հավաքածու, որում ներառված արժեքների նկատմամբ Քասախի համայնքապետարանը հայտնում է իր հանձնառությունը:

## Հիմնավորումներ

1. Տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխման համատեքստում ընդլայնվում է Քասախի համայնքապետարանի (ավագանի, համայնքի ղեկավար), համայնքային ծառայողների, հայեցողական պաշտոններ զբաղեցնողների և համայնքային ենթակառուցվածքի աշխատակիցների գործունեության շրջանակը. հասարակությունն ավելի ու ավելի բարձր պահանջներ է ներկայացնում նրանց աշխատանքի որակի նկատմամբ:
2. Պետության կողմից իրականացվող ապակենտրոնացման քաղաքականության պայմաններում Քասախի համայնքապետարանը ստանձնում է նոր լիազորություններ և գործառույթներ, որոնք անհրաժեշտ է իրականացնել սահմանափակ միջոցների առկայության պայմաններում՝ ապահովելով որոշումների կայացման մասնակցությունը, կիրառելով հանրային-մասնավոր համագործակցության տարբեր ձևաչափեր:
3. Հնարավոր չէ ապահովել քաղաքացիների իրական լայն մասնակցություն տեղական ինքնակառավարմանը առանց ՏԻՄ-ի նկատմամբ հանրային վստահության ամրապնդ-

ման, նրանց աշխատանքում պատասխանատվության, թափանցիկության և բարեվարքության ապահովման:

4. Սույն Կանոնները բխում են Քասախի համայնքապետարանի համակարգը կարգավորող օրենսդրության (ՀՀ Սահմանադրություն, Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենք, Համայնքային ծառայության մասին ՀՀ օրենք և այլն) ոգուց: Այդուհանդերձ, էթիկայի և վարքի ոլորտին առնչվող որոշ հարցեր կամ չեն կարգավորվում օրենքներով կամ առկա կարգավորումները լրացուցիչ մանրամասնման կարիք ունեն:
5. Սույն Կանոնների ընդունումով ձևավորվում է հակակշիռ՝ տեղական մակարդակում լիազորությունների չարաշահման կամ կամայական կիրառման, անազնիվ վարքագծի, հայեցողական իրավունքի ի չարս գործադրման:
6. Սույն Կանոնները նպատակ ունեն նպաստելու Հայաստանում հակակոռուպցիոն միջոցառումների՝ տեղական մակարդակում իրականացմանը՝ առավելապես դիտարկելով ոչ միայն կոռուպցիայի առանձին դրսևորումներ, այլ որպես համակարգային արատ, որ պետք է կանխարգելել:

**Կանոններ**

1. ՏԻՄ-ը՝ ավագանի, համայնքի ղեկավար, համայնքային ծառայողները և հայեցողական պաշտոնյաները (այսուհետ միասին՝ ՏԻՄ ներկայացուցիչներ) պետք է իրականացնեն իրենց գործառույթները և լիազորությունները **բացառապես ի շահ հանրության** և ոչ թե առանձին անհատների, խմբերի, կամ անձնական շահերից ելնելով:
2. ՏԻՄ ներկայացուցիչն ընդունում է, որ **իր միակ գործառույթը** իր գործատուին՝ **հանրությանը ծառայելն է,** և պարտավոր է շարունակաբար կատարելագործել իր գիտելիքներն ու մասնագիտական կարողությունները՝ բարելավելու մատուցվող ծառայությունների որակը:
3. ՏԻՄ ներկայացուցիչը պետք է դրսևորի **օրինակելի վարք,** զերծ մնա անպարկեշտ պահվածքից: Քաղաքացիների նկատմամբ մշտական բարյացակամ և կիրթ վերաբերմունքը անբաժանելի են ՏԻՄ ներկայացուցչի կերպարից:
4. ՏԻՄ ներկայացուցիչը պետք է **զերծ մնա աչառու վերաբերմունքից,** ինչը կարող է կասկածի տակ առնել Քասախի համայնքապետարանի անկողմնակալությունը և խաթարել Քասախի համայնքապետարանի նկատմամբ քաղաքացիների վստահությունը:
5. ՏԻՄ ներկայացուցիչը պետք է **զերծ մնա խտրական վարքագծից,** առաջնորդվի իրավահավասարության, մարդու իրավունքների հարգման սկզբունքով:
6. Հարգելով տեղեկատվություն ստանալու քաղաքացիների իրավունքը, ապահովելով թափանցիկ և հաշվետու կերպով աշխատելու պահանջը՝ ՏԻՄ ներկայացուցիչը պարտավոր է **զերծ մնալ** ի պաշտոնե իրեն հասանելի **տեղեկատվության չթույլատրված բացահայտումից,** որը բխում է անձնական կամ որևէ խմբային շահից:

7. ՏԻՄ ներկայացուցիչը պետք է **զերծ մնա շահերի բախումից,** երբ ՏԻՄ ներկայացուցչի սեփական շահը գերադասվում է մասնագիտական կամ հանրային շահից: Պաշտոնը ստանձնելիս կամ ընտրվելիս ՏԻՄ ներկայացուցիչը **հայտարարագրում է** իր շահերը: Լիազորությունները վայր դնելու կամ պաշտոնից հրաժարվելու դեպքում ՏԻՄ ներկայացուցիչը **չպետք է իր պաշտոնավարության ընթացքում ձեռք բերած տեղեկությունը կամ կապերը օգտագործի** նոր աշխատավայրում արտոնություններ կամ առավելություն ստանալու նպատակով:
8. Այն դեպքում, երբ ՏԻՄ ընտրված ներկայացուցիչը քվեարկության դրված հարցի մեջ անձնական, նյութական, դրամական կամ այլ ուղղակի շահ ունի, ապա նա **պետք է այդ մասին հայտնի** ՏԻՄ-ին, **չպետք է մասնակցի** այդ հարցի վերաբերյալ **քվեարկությանը**՝ շահերի բախման դեպքից խուսափելու նպատակով:
9. ՏԻՄ ներկայացուցիչը պետք է ուշադիր լինի **երկու կամ ավելի պաշտոն զբաղեցնելու հետ կապված սահմանափակումներին:** Մասնավորապես, ՏԻՄ ներկայացուցիչը չի կարող ունենալ գործառույթներ, որոնք ենթադրում են վերահսկողություն մեկը մյուսի նկատմամբ:
10. Որոշումներ կայացնելիս ՏԻՄ ներկայացուցիչը պետք է առաջնորդվի ոչ միայն օրենքի տառով, այլև օրենքի ընդհանուր գաղափարով՝ ոգով: Այս առումով յուրաքանչյուր որոշում կայացնելիս պետք է հաշվի առնի իր որոշման էթիկական կողմը, օրինակ՝ որոշումը կարո՞ղ է վնասել որևէ մեկին կամ խմբին, տվյալ հարցը տնտեսապես նպատակահարմա՞ր է, արդյո՞ք որոշումը հիմնված է լիարժեք տեղեկատվության հիման վրա, որոշման ո՞ր տարբերակն է, որ հաշվի է առնում բոլոր ներգրավված կողմերի շահերը, ո՞ր տարբերակն է, որ ներքին բավարարվածություն կարող է բերել:

**Կիրառումը**

1. Սույն Կանոնները հանդիսանում են ուղեցույց և կարող են լրամշակվել Քասախի համայնքապետարանի կողմից, որից հետո դրանք ընդունվում են ավագանու նիստում:
2. ՏԻՄ ներկայացուցիչը ընտրվելով կամ ստանձնելով պաշտոնը ծանոթանում է սույն Կանոններին և ստորագրում համապատասխան ձևաթուղթը, որը կցվում է անձնական գործին:
3. ՏԻՄ-ը ձևավորում է էթիկայի հանձնաժողով՝ բաղկացած ՏԻՄ պաշտոնյաներից և համայնքի հեղինակություն վայելող քաղաքացիներից, որը վերահսկում է Կանոնների կատարումը, դիտարկում է Կանոնների խախտման վերաբերյալ հաղորդումներ և դեպքեր, ի գիտություն է ընդունում ՏԻՄ ներկայացուցչի շահերի բախման հետ առնչվող հայտարարագրերը, սահմանում և կիրառում է Կանոնների խախտման դեպքում կիրառվող պատժամիջոցներ:
4. Կանոնները հրապարակային են և հասանելի հանրության համար:

Քասախ համայնքի ղեկավար՝ Ա. Մկրտչյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 55

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ԵՎ ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝* ***համայնքի ավագանին որոշում է***

Հաստատել համայնքի ղեկավարի կողմից ներկայացված համայնքային սեփականություն համարվող գույքի և հողերի օտարման ցանկը և դրանց մեկնարկային գները՝ համաձայն հավելվածի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵԴՐԱԿ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԻԿ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵԴՐԱԿ
4. ՂԱԶԱՐՅԱՆ ՊԱՅԾԱՌ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ԳՐԵՏԱ
6. ՍԱՀԱԿՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Քասախ համայնքի
ավագանու 2016 թվականի
դեկտեմբերի 28-ի N 55
որոշման

| հ/հ | ԾԱԾԿԱԳԻՐԸ | ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ | ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ | ՄԱԿԵՐԵՍԸ | ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 07-065-0025-0290 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 0,0095 հա | 236379 դրամ |
| 2 | 07-065-0058-0027 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 0,1000 հա | 2488200 դրամ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 56-Ն

## ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, ինչպես նաև «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետությանօրենքի 8-րդ հոդվածի և 10-րդ հոդվածի պահանջները* **համայնքի ավագանին որոշում է**

1. Սահմանել Քասախ համայնքի վարչական տարածքում 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ.

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15.000 դրամ,

բբ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25.000 դրամ,

բգ. 1001 և մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար մինչև 25.000 դրամ.

բդ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար մինչև 50.000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ.
դ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝2500դրամ:
2) Քասախ համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ տեղական տուրքը սահմանվում է 1500 դրամ.
բ. բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.
գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն որոշման իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը:
3) Քասախ համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության տեղական տուրքը սահմանվում է 2500 դրամ:
4) Քասախ համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

4.1) Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10.100 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13.100 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20.100 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25.100 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 100.000 դրամ:

4.2) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10.100 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13.100 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20.100դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25.100 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 100.000 դրամ:

5) Քասախ համայքնի վարչական տարածքում՝

ա. բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ մեկ քառակուսի մետրի համար.

բ. հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 170.000 դրամ:

գ.խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 35.000 դրամ.

գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3.000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5.100 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10.100 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15.100 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20.100 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 50.000 դրամ,

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1.000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2.000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝  4.000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7.000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10.000 դրամ,

